

- 103 Այլ ոչ պատրէր նոյն ողբ զ^օնոսայ
 Որոց յայտ էր խէթն Յակորայ,
 Որու՛մ իսկոյն ասեն սոքայ,
 Մի լայր, համբեր, տեսցուք ապայ:
- 104 Սոքին էին ընդ ամենայն
 Պերձ Աբրահամն որ Քուլելեան,
 Մեծ Սիմէօնն որ Աստուրեան,
 Ճոխ Մարտիրոսն որ Չոպանեան:
- 105 Ընդ որս Գասպար եւ Պաղտասար,
 Սիւնք Մուրատեան տանն պայծառ,
 Եւ այլ իշխանք արք բարեփառ,
 Որք անդ գըտան Սարգսի սատար:
- 106 Տեսեալ զ^օնոսա Յակոբ Ճարպիկ,
 Զի առնէին զայն դատ յուշիկ,
 Յաճախէր զիւր ողբն եւ լալիք,
 Առ որսալ անդ զանգէտ մարդիկ:
- 107 Որպէս եւ իսկ շահէր լալով
 Զաղաւնամիտ անձանց ժողով
 Որ ըզՍարգիս պարսաւելով
 Աքսորեսցի գոչէր շուտով:
- 108 Ընդ որս եւ այլք ի ներհակաց,
 Բարեկրօն Քաղիկեդոնկաց,
 Կառաչէին ելցէ ի բաց,
 Սարգիս գըլուխ երկաբ^օնակաց:
- 109 Անդ եւ Մաթոս այր անհասու,
 Բայց Սառաֆաց վերակացու,
 Ասէր զՍարգսէ ձայնիւ բարձու,
 Գոլ մեղապարտ է՛ արժան մահու: